ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Ընդդեմ Shabat.am առցանց լրատվամիջոցի՝ «Մեդիամաքս մեդիա քոմփանի» ՍՊԸ տնօրեն Արա Թադեւոսյանի դիմումի վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել «Մեդիամաքս մեդիա քոմփանի» ՍՊԸ տնօրեն Արա Թադեւոսյանը՝ ընդդեմ Shabat.am առցանց լրատվամիջոցի, որի յութուբյան պաշտոնական էջում, կայքում եւ սոցիալական այլ էջերում տեղադրված «Իրական տերերն ու քաղաքական տանիքները. լրատվական դաշտի պատկերը Հայաստանում» վերնագրված տեսանյութը (https://bit.ly/2WBIiJs), ըստ դիմողի, կեղծ տեղեկատվություն է պարունակում «Մեդիամաքս մեդիա քոմփանի» ՍՊԸ-ի եւ վերջինիս պատկանող Mediamax.am լրատվամիջոցի վերաբերյալ:

Ա. ՓԱՍՏԵՐ

1. Shabat.am առցանց լրատվամիջոցը 2019թ. ապրիլի 21-ի իր յութուբյան պաշտոնական էջում, կայքում եւ սոցիալական այլ էջերում տեղադրել է «Իրական տերերն ու քաղաքական տանիքները. լրատվական դաշտի պատկերը Հայաստանում» վերնագրված տեսանյութը (https://bit.ly/2WBIiJs), որում, մասնավորապես «Մեդիամաքս մեդիա քոմփանի» ՍՊԸ-ի եւ վերջինիս պատկանող Mediamax.am լրատվամիջոցի վերաբերյալ ասված է հետեւյալը. «Քոչարյան-Սարգսյան տանդեմի հետ են նաեւ... Արմեն Գեւորգյանի եւ Վիկտոր Սողոմոնյանի ընկեր Արա Թադեւոսյանի «Մեդիամաքսը» (տեսանյութի 2:41 րոպեից):

2. 2019թ. ապրիլի 29-ին Մեդիամաքսի շահերը ներկայացնող «ԼեգալԼաբ» ՓԲԸ-ն նամակ է ուղարկել Shabat.am ԱՊԸ գլխավոր խմբագիր Մարիամ Մելքումյանին՝ պահանջելով «հեռացնել նշված տեսանյութի մեր անվան օգտագործմամբ մասը (սկիզբ՝ 2

ռոպե 40 վայրկյան)՝ կեղծ տեղեկատվություն պարունակելու հիմքով, հրապարակել հերքում՝ նշելով, որ «Մեդիամաքս մեդիա քոմփանի» ՍՊԸ-ն եւ Mediamax.am լրատվամիջոցը վարում են անկախ լրատվական քաղաքականություն եւ որեւէ քաղաքական ուժի կամ ճամբարի չեն աջակցում»:

3. 2019թ. ապրիլի 30-ին Shabat.am առցանց լրատվամիջոցի կայքում հրապարակվել է հերքում (տես https://bit.ly/2EZbtew), որում, մասնավորապես, ասված է, (մեջբերում ենք). «... հերքում ենք տեսանյութում տեղ գտած տեղեկատվությունը առ այն, որ «Քոչարյան-Սարգսյան տանդեմի հետ է նաեւ Մեդիամաքսը», ինչպես նաեւ փաստում ենք, որ տեսանյութում առկա 2 ռոպե 40 վայրկյան մասում հնչած միտքը՝ «Արմեն Գեւորգյանի եւ Վիկտոր Սողոմոնյանի ընկեր Արա Թադեւոսյանի Մեդիամաքսը» եւս պարունակում են «Մեդիամաքս մեդիա քոմփանի» ՍՊԸ-ի իրավունքները խախտող չստուգված տեղեկություններ: Արձանագրում ենք, որ չկան փաստեր, որոնք կասկածի տակ կառնեն այն, որ «Մեդիամաքս մեդիա քոմփանի» ՍՊԸ-ն եւ Mediamax.am լրատվամիջոցը վարում են անկախ լրատվական քաղաքականություն եւ որեւէ քաղաքական ուժի կամ ճամբարի չեն աջակցում: Shabat.am-ը ներողություն է հայցում «Մեդիամաքս մեդիա քոմփանի» ՍՊԸ-ից եւ պարտավորվում է սույն հերքման տեքստն ամբողջությամբ հրապարակել Shabat.am կայքում, Shabat.am-ի ֆեյսբուքյան էջում, ինչպես նաեւ Shabat.am կայքում հրապարակված հերքման ակտիվ հղումը տեղադրել «Իրական տերերն ու քաղաքական տանիքները. լրատվական դաշտի պատկերը Հայաստանում» տեսանյութի Նկարագրություն բաժնում» (մեջբերման ավարտը): Ի դեպ, Shabat.am-ը մինչ այդ՝ 2019թ. ապրիլի 25-ին, նույն տեսանյութում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հիմնադրած Iravaban.net լրատվական կայքի վերաբերյալ տեղեկությունները նույնպես հերքել էր, հիշյալ կազմակերպության պահանջով (տես https://bit.ly/2XKAbXD)

4. «Մեդիամաքս մեդիա քոմփանի» ՍՊԸ տնօրեն Արա Թադեւոսյանն 2019թ. ապրիլի 30-ին դիմել է նաեւ ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին՝ եւ առաջարկել «գնահատական տալ վերոնշյալ հրապարակմանը, որում մեկ լրատվամիջոց (Shabat.am) «դասակարգել է» մյուս լրատվամիջոցին (Mediamax.am)՝ չներկայացնելով որեւէ ապացույց», անկախ իրենց հերքումը հրապարակելու փաստից:

5. ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը 2019թ. մայիսի 30-ին էլեկտրոնային նամակով դիմել է Shabat.am լրատվական կայքի գլխավոր խմբագիր Մարիամ Մելքումյանին՝ տեղեկացնելով, որ Դիտորդ մարմինն առաջիկայում քննարկելու է բողոքը, ակնկալելով եզրակացության անաչառությունն ապահովելու

համար ստանալ նաեւ խնդրի վերաբերյալ տվյալ խմբագրության տեսակետը: Նամակը ոչ մի արձագանք չի ունեցել:

Բ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. **«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք**

Հոդված 8. Հերքման եւ պատասխանի իրավունքը

1. Անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը:

Հերքման պահանջը կարող է ներկայացվել մեկամսյա ժամկետում՝ հաշված այն տեղեկատվության տարածման օրվանից, որին վերաբերում է հերքումը:

2. Լրատվական գործունեություն իրականացնողը հերքման պահանջն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, պարտավոր է հերքման պահանջը ներկայացնողին տեղեկացնել հերքումը տարածելու ժամանակի մասին կամ գրավոր հայտնել հերքման տարածումը մերժելու մասին:

3. Հերքումն իրականացվում է լրատվության նույն միջոցում, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա հերքում պահանջողի համար ընդունելի այլ եղանակով:

Հերքումն իրականացվում է դրա պահանջն ստանալու օրվանից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում: Այդ ժամկետում լրատվության միջոցի թողարկում տեղի չունենալու կամ միակ թողարկումն արդեն իսկ թույլատրված լինելու դեպքում հերքումը պետք է տեղ գտնի լրատվության միջոցի առաջին իսկ թողարկման մեջ:

Հերքումն իրականացվում է «Հերքում» խորագրի ներքո: Տեղակայման, ձեւավորման, տառատեսակի չափի ու տեսակի, հաղորդման ժամի առումով հերքումը չպետք է զիջի այն տեղեկատվությանը, որին վերաբերում է:

II. **Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր**

1. Ճշգրտություն և անկողմնակալություն

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն

ու լրագրողը պարտավոր են՝

1.1. մինչև հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել և չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ,

1.2. հստակորեն ու լսարանի համար հասկանալի մատնանշել այն դեպքերը, երբ խմբագրությունը, ստանալով հանրային նշանակության տեղեկություններ, օգտագործել է բոլոր հնարավոր ողջամիտ միջոցները, սակայն չի կարողացել ճշտել փաստերը,

1.3. հստակ սահմանազատել փաստերի և տեղեկությունների շարադրանքը՝ կարծիքներից, վերլուծություններից և մեկնաբանություններից,

1.4. վերլուծություններ և մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի և հավաստի տեղեկությունների վրա:

6. Ազնվություն հանրության հետ հարաբերություններում

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

6.1. աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից,

6.2. պատրաստակամ լինել հանդիպելու այն անձանց կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում կոնկրետ հրապարակմամբ և պատասխանի հնարավորություն ընձեռելու բոլոր նրանց, ում հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ են եղել հրապարակումներում,

6.3. ընդունել սեփական սխալները և պատրաստակամ լինել՝ ուղղելու դրանք,

6.4. քաջալերել հանրությանը՝ արտահայտելու ԶԼՄ-ների նկատմամբ իրենց քննադատական վերաբերմունքը, պատրաստ լինել լրագրողական էթիկայի հարցերի շուրջ հասարակության հետ երկխոսության:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

- մատնանշելով, որ լրատվամիջոցների իրական սեփականտերերի թափանցիկությունն իսկապես խիստ կարեւոր է եւ օրախնդիր, քանի որ դա է վստահելիության գրավականը,

- հիշեցնելով, որ լրատվամիջոցների առաքելությունը ոչ միայն տեղեկություններ եւ գաղափարներ տարածելն է, այլ նաեւ դրանք վերլուծելը, մեկնաբանելը,

- ի գիտություն ընդունելով և ողջունելով Shabat.am լրատվական կայքում հերքումների հրապարակման փաստը,

արձանագրում է.

1. փորձելով պարզել մի շարք լրատվամիջոցների իրական սեփականատերերին՝ Shabat.am լրատվական կայքը հիշյալ հրապարակման մեջ վերլուծությունը եւ մեկնաբանությունները կատարել է մակերեսորեն, առանց հիմնավոր փաստերի՝ հիմնվելով հիմնականում հասարակության մեջ շրջանառվող լուրերի վրա,

2. հիշյալ պնդումների համար անհրաժեշտ էին լրագրողական խորը հետաքնություն և հիմնավորված, փաստարկված ապացույցներ,

3. այդպիսով Shabat.am կայքը թերացել է ընթերցողին հանրային կարեւոր նշանակություն ունեցող թեմայի վերաբերյալ ստուգված տեղեկություններ ներկայացնելու գործում, ինչը պրոֆեսիոնալ լրատվամիջոցի առաքելությունն է:

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի
2019թ. հունիսի 11-ի նիստում,
Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ, «Կոնցեռն Դիալոգ» փաստաբանական ընկերության հանրային կապերի պատասխանատու

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 46-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: